Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԽԱՉԻԿ ՀՐԱՉՅԱՆ

# ՇԵՓՈՐՆԵՐ

(ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ)

Библиотека
Института
Востоковедения
Академии Наук
СССР

ՊԵՏՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ 1931

891.99
Z-94

331.99
Z-94

ԽԱՉԻԿ ՀՐԱՉՅԱՆ

Библиотека
Института
Востоковедения
Академии Наук
СССР
6 NOV 2017

# ՇԵՓՈՐՆԵՐ

I

(ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ)

ՊԵՏՀՐԱՏ 1931 ԵՐԵՎԱՆ

17 JUN 2013

40220

Պետհրատի տպարան
Գլավ. № 6452 (բ)
Հրատ. № 1680
Պատ. № 3151
Տիր. 4.000
▽

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ–Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

56635-66

## ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ

Մեր պայքարի այն որերում
Տարել ես շատ հաղթանակներ
Գրավել ես բերդեր, տանկեր
Մեր պայքարի այն որերում։
Հոկտեմբերյան գրոհներում
Արշավել ես հաղթ, աներեր
Մեր պայքարի այն որերում
Տարել ես շատ հաղթանակներ։
Քաղցն է հյուծել մարտիկներիդ,
Ու ծարավն է յերգել անհագ.
Պաշտպանումի դիրքի վրա
Քաղցն է հյուծել մարտիկներիդ։
Պատրաստվել ես գրոհների,
Միշտ յեղել ես դիրքի վրա,
Քաղցն է հյուծել մարտիկներիդ
Ու ծարավն է յերգել անհագ։
Յեղել ես դու, ու կլինես
Պայքարներում հաղթանակող.
Պայքարների բոցում այրող
Ցեղել ես դու, ու կլինես։
Մինչև իսպառ հաղթանակես
Դասակարգին շահագործող.
Յեղել ես դու, ու կլինես
Պայքարներում հաղթանակող։

29 թ. Յերևան

## 1. ՆՐԱՆՔ...

1

Կաբինետներում նստած արթուն
Նրանք խորհում են գիշեր, ցերեկ.
Փորում են գանգի պատերն անվերջ
Կաբինետներում նստած արթուն։
Գազեր հնարել... գալիք մարտում
Չի՛ լինի ճակատ, փախուստ դեպ հետ.
Կաբինետներում նստած արթուն
Նրանք խորհում են գիշեր, ցերեկ։

2.

Ամեն ուղեղը մի Եդիսոն
Վորոճում է լուռ մահ ու վոճիր.
—Ժամում աշխարհը դարձնել վոչինչ...
Ամեն ուղեղը մի Եդիսոն։
Դեղին գանգերը մահի հեսան—
Սրում են ավերջ, կրկին, նորից։
Ամեն ուղեղը մի Եդիսոն՝
Վորոճում է լուռ մահ ու վոճիր։



## 2. ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ...

1

Նորից վոռնում են շակալները,
Սպասում դիակներին անթաղ.
Քաղցած աչքերով, արնածարավ—
Նորից վոռնում են շակալները։
Վառոդի հոտը զգացել են
Ու քրքջում են ժանտ և ուրախ...
Նորից վոռնում են շակալները,
Քաղցած աչքերով, արնածարավ։

2.

Ողը ծխում է վառոդահոտ
Յեվ գուշակում է ինչ վոր տագնապ.
Վորպես կրակում այրվող մի լաթ՝
Ողը ծխում է վառոդահոտ։
Քար լռությունը չարագուշակ
Նստել է ծանր, վորպես կապար։
Ողը ծխում է վառոդահոտ
Յեվ գուշակում է ինչ վոր տագնապ։

3.

Նրանք զինվում են խելակորույս,
Ամբողջ ուժերը լարում մեկին.
...—Պատմության նշած գիծը թեքել
Նրանք զինվում են խելակորույս։
Ինչպես խեղդվողը վերջին անհույս
Փորձերն է անում.(հանկարծ փրկվել...)
Նրանք զինվում են խելակորույս,
Ամբողջ ուժերը լարում մեկին։

## 3. ԱՀԱՁԱՆԳ

1.

Զգաստ! թշնամին գործում է լուռ,
Սրում զենքերը մահատարած.
Սուր սվինները պատրաստ պահած
Զգաստ! թշնամին գործում է լուռ։
Վերջին ճիգերն են, վերջին թափուր
Զանքերը և՛ ժանտ և՛ հուսահատ.
Զգաստ! թշնամին գործում է լուռ,
Սրում զենքերը մահատարած։

2.

Յել, կոսոմոլիա, հորդիր փողոց
Զավոդից, հանքից, լայն դաշտերից.
Վոնց հոկտեմբերյան գրոհներին
Յել, կոմսոմոլիա, հորդիր փողոց։
Դեռ պիտի յերգեն արյան վոխով
Ռումբերը դաժան վարից, վերից.
Յել. կոմսոմոլիա, հորդիր փողոց
Զավոդից, հանքից, լայն դաշտերից։

3.

Սովորիր խփել ճիշտ խնձորին,
Վորպեսզի մարտում լինենք հաղթող.
Գնդակներն իզուր չկորչեն թող,
Սովորիր խփել ճիշտ խնձորին։
Մարտի պիտ յելնենք դեռ մենք նորից
Կապիտալի դեմ յերկաթակող։
Սովորիր խփել ճիշտ խնձորին,
Վորպեսզի մարտում լինենք հաղթող։



## 4. ՅԵՂԵՔ ԱՅԴՊԵՍ...

1.

Ճանաչում եք դուք այն բանվորին *)
Լուգանսկից յելած, գիտեք նրան.
Նրա կեցվացքը ձիու վրա...
Ճանաչում եք դուք այն բանվորին։
Մի բանվոր եր նա, հասարակ մի
Աշխատավոր, բայց յերկաթակամք...
Ճանաչում եք դուք այն բանվորին
Լուգանսկից յելած, գիտեք նրան.

2.

Մեր վեհ պայքարի այն որերում
Թնդում եր նրա ձայնը խրոխտ,
Մղում եր դեպի մարտ ու գրոհ —
Մեր վեհ պայքարի այն որերում։
Քաղաքներում ու ստեպներում
Սլանում եր ձին քառատրոփ.
Մեր վեհ պայքարի այն որերում
Թնդում եր նրա ձայնը խրոխտ։

*) Վորոշիլով.

## 5. ՀԻՇԵՑՈՒՄ ԹՇՆԱՄՈՒՆ.

1.

Դուք հիշում եք չե՞, հոկտեմբերը,
Յերբ վոր դեմ առ դեմ յելանք. դուք—մենք
Վորպես վոսոխներ իրարամերժ...
Դուք հիշում եք, չե՞, հոկտեմբերը։
Յերբ յերգում ելին բարկ ռումբերը,
Վորպես «արտակարգ» մի նոր «համերգ»...
Դուք հիշում եք, չե՞, հոկտեմբերը,
Յերբ վոր դեմ առ դեմ յելանք. դուք—մենք...

2.

Հիշում եք դուք, չե՞, այն որերում
Մեր մրրկարշավ գրոհները.
Մեր աված անթիվ այն զոհերը
Հիշում եք դուք, չե՞, այն որերում։
Իսկ հետո յելան, վորպես սամում
Բուդյոնովյան քաջ հեծյալները.
Հիշում եք դուք, չե՞, այն որերում
Մեր մրրկարշավ գրոհները։

3.

Հիշում եք դուք չե՞, լավ եք հիշում
Զին արևելյան յերկաթուղին
—Յերբ «կարմիրները գիծը թողին»...
Հիշում եք դուք չե՞, լավ եք հիշում,
Հնչեց Բլյուխերյան ազդանշան
Ու դասակները գրոհ ավին.
Հիշում եք դուք չե՞, լավ եք հիշում
Զին արևելյան յերկաթուղին...



## 6. ԱՅՆՏԵՂ—ՆՐԱՆՑ ՄՈՏ...

1.

Հիմա Խարբինում կամ Կանտոնում
Յելել է չարքաշ կուլին վոտքի.
Յելել է բռնության դեմ բողոքի—
Հիմա Խարբինում կամ Կանտոնում։
Նա իր յերկունքի տոնն է տոնում,
Ու պայքարում է հանուն կյանքի։
Հիմա Խարբինում, կամ Կանտոնում
Յելել է չարքաշ կուլին վոտքի։

2.

Նա գիտե, վոր կա այլ մի յերկիր,
Վորտեղ ազատ են կուլի, բանվոր,
Վորտեղ չկա տեր, չկա գրկող.
Նա գիտե, վոր կա այլ մի յերկիր։
Բանվորն է տերն իր աշխատանքի,
Այնտեղ տեղ չունի շահագործող...
Նա գիտե, վոր կա այլ մի յերկիր,
Վորտեղ ազատ է կուլի, բանվոր։

3.

Հիմա Լոնդոնում, Մանչեստրում,
Սովից մեռնում է մի Հանս, կամ Ժան.
Սովը հնձում է անգութ, դաժան.
Հիմա Լոնդոնում, Մանչեստրում։

Իսկ իրենց փայլուն, զեղխ տներում
Ուտում են տերերը, պարում չարլստոն.
Հիմա Լոնդոնում, Մանչեստրում
Սովից մեռնում է մի Հանս, կամ Ժան...

4.

Հիմա Բերլինում, Վաշինգտոնում,
Փարիզում շվայտ, կամ Մադրիդում
Պայքարի յերգն է գոռ դղրդում.
Հիմա Բերլինում, Վաշինգտոնում...
Բանվորն իր կյանքի տոնն է տոնում,
Հարթում է ճամբան ու պայքարում։
Հիմա Բերլինում, Վաշինգտոնում,
Փարիզում շվայտ, կամ Մադրիդում։



## 7. ԴԵՌ ԿԵԼՆԵՆՔ...

1.

Յերբ վոր խրխնջա ձին ու դոփի
Յեվ Բուդյոնովյան մարշը թնդա,
Կելնեն շարքերը վարժ ու զգաստ,
Յերբ վոր խրխնջա ձին ու դոփի...
Կերգեն արկերը թնդանոթի,
Կթափվի խպրիտ, կհոսի գազ,
Յերբ վոր խրխնջա ձին ու դոփի,
Յեվ Բուդյոնովյան մարշը թնդա...

2.

Կելնենք ամեն մի ակնթարթում
Զգաստ ու արթուն, սպառազեն.
Հենց վոր թշնամին յելնի մեր դեմ՝
Կելնենք պատրաստ, մի ակնթարթում։
Հսկում է ահա պահակն արթուն.
Թարթում աչքերը զգաստ, անթեք.
Կելնենք ամեն մի ակնթարթում—
Հենց վոր թշնամին յելնի մեր դեմ։

3.

Դեռ կելնենք կրկին վերջին մարտի
Յեվ կգրոհենք համառ ու բարկ.
Վորպես սասանող մի համազարկ
Դեռ կելնենք կրկին վերջին մարտի։

Իսկ վերջին մարտը լերը ավարտվի՝
Արխիվ կնետենք գնդացիր, արկ...
Դեռ կեղնենք կրկին վերջին մարտի
Յեվ կգրոհենք համառ ու բարկ։

4.

Վորոշիլովյան համառությամբ
Կեղնեն շարքերը մեր յերկաթե.
Կեղնեն անները, դգաստ, թեթև
Վորոշիլովյան համառությամբ։
Թող թշնամին մեր քսու ու ժանտ
Խորամանկ ու մութ դավեր նյութե.
Վորոշիլովյան համառությամբ
Կեղնեն շարքերը մեր յերկաթե...

5.

Յերբ աշխարհները ձուլենք ի մի
Յեվ արխիվ նետենք գնդացիր, արկ՝
Կջնջենք սահմաններն անդարձ
Յերբ աշխարհները ձուլենք ի մի։
Կքանդենք հիմքից աշխարհը հին,
Ու կվերացնենք դաս, դասակարգ—
Յերբ աշխարհները ձուլենք ի մի,
Յեվ արխիվ նետենք գնդացիր, արկ։

25/III—25/IV 1931 թ. Յերևան



# ԽԱՌԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ

Դանդաղ լուսացավ այն առավոտը,
Արևը բարձրացավ, հևաց, հևաց.
Առավոտյան մուժում լռեց թնդանոթը,
Հանդարտ գալարվեց Նեվան։
Յեվ մշուշում ցնդող մարեց արձագանքը
Հորիզոնը կիսող ռումբի...
Հեռուներում հնչեց ահազանգի զանգը
Յերբ բարձրացան նրանք թումբից։
Խելագար մի խանդով թնդաց թնդանոթը
Ու վառոդի հոտը ցնդեց ոդում,
Խինդով խանդավառ ու խնդուն առավոտը
Հրավառվեց ցնդող տոթում...
Յեվ յերկաթե ամուր կրունկները վստահ
Դոփեցին լայն փողոցների վրա
Ու բարձրացան հուժկու, ու ցասկոտ, ու հաստատ,
Դրոհեցին պալատների վրա.
Յեվ ալիքեց նրանց ուժը հորձանք-հորձանք,
Յասման կատաղությամբ ու վրեժի,
Պալատները շքեղ յեղան դահակործան,
— Վերջին կռիվն ու մարտը վերջին։
Յեվ վերջին մի խանդով թնդաց թնդանոթը
Ու վառոդի հոտը ցնդեց ոդում.
Խինդով խանդավառ ու խնդուն առավոտը
Հրավառվեց ցնդող տոթում։
...Ու ծփացին անթիվ դրոշները կարմիր,
Փողփողացին արևի դիմաց.
— Խորհրդային յերկիր, խորհրդային յերկիր
Վորքան խնդասիրտ ես հիմա...

30 թ.

## ԿԱՐՄԻՐ ՁԻԱՎՈՐԸ

ՎԼՈՐՈՇԻԼՈՎԻՆ

Մենք տապալել ենք վոսոխին մեր,
Յեվ գրավել ենք բերդերը գոռ.
Բայց կռվի դաշտում ո՞վ, այն ո՞վ եր
Վորոտում հուժկու. «գրոհ, գրոհ»...

Այդ նա յեր, նա յեր, հերոսն անահ,
Վոր բարձրացավ հաղթ մարտի մուժից
Վորպես պալքարի անպարտ վահան,
Վորպես տրուբադուր կարմիր ուժի։

Յեվ ստեղներում լայնանծավալ
Ու քաղաքներում հաղթամկան՝
Ուր արշավում եր հերոսաբար
Կարմիր բռնուցքը. վորպես մրրիկ

Արշավում եր սուր կարմիր մի ձի
Ու խրխնջում եր ու սլանում
Յեվ գոռ մարտերի մուժի միջից
Ուրվագծվում եր հաղթ մի գլուխ։

Նա յեր, այդ նա յեր, հերոսն անահ,
Այդ Նրա ձայնն եր հաղթ վորոտում —
Ու տարածվում եր, ցրվում ոդում,
Վորպես մուրճերի հաղթական ձայն։



Յերբ վորոտում եր հերոսաբար
Նրա ձայնը գոռ ու հոնդուն՝
Հեռվից ժպտում եր նրան Կոբան [1])
Յեվ յերգում յերգը Մեծ Բուդյոննու։

... Վեր բարձրացավ սանդուխներից
Կանգնեց ամբյոնին. ու անսասան
Նայեց դիմացը. գլուխների
Մի մեծ ովկիանոս, ահա մասսան...

Ու թվաց Նրան, առաջնորդին,
Վոր ամեն մեկը այդ ամբողջի
Լցված է անհուն մեծ յեռանդով.

Ու նա պարզ տեսավ, վոր յեթե նա,
Այդ մասսան շարժվի վորպես մեծ ծով
Կ՝ հեղեղի վողջ աշխարհն անգամ։

Ու նա պարզ տեսավ գալիք մի մարտ
Ահեղ վրեժի ու հատուցման՝
Ուր պիտի յենուն դեմ հանդիման
Յերկու անհաշտ ու մեծ դասակարգ։

Ու նա պարզ տեսավ այն մարտերը
Վորոնք պիտ ցնցեն աշխարհը վողջ,
պիտ յերգեն նորից գոռ արկեր
Ու պիտի վոռնա թնդանոթը...

56635.66

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

[1]) Սասունի կեղծանուններից մեկն է։

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ-Арм. ССР
Ա. ԱՄ. Ա. Մասնայեանի
Ա. ՍՍԱՄԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Նորից կարշավի էր կարմիր ձին
Ու կ՛ խրխնջա, ու կ՛ դոփի
Յեվ թեժ մարտերի մուժի միջից
Կ՝ վռնա փողը թնդանոթի։

Նորից կերգեն հին ընկերները,
Վորոնք գործում են հիմա «խաղաղ»
Նորից կարշավեն հեծյալները,
Կ՝ ժպտա հեռվից Նրան Կոբան...

... Յեվ կ տապալվի նա, վոր հին է,
Կ՝ վոչնչանա անհեղ մարտում.
Շարժվում է անկանգ այն անիվը,
Վոր Մարքսն է կոչել — պատմություն։

30 թ. հունիս Յերևան



## ԱՐՇԱՎ

Ժպտում են զենքերը, ժպտում այսոր,
Ձիերը տրտինգ են տալիս հպարտ.
Դուրս գանք պիտ արշավի նորից մարշով,
Պիտ յերգեն փամփուշտները տրա՛, տա՛, տա՛
Ե՜խ, ո՛վ է հերոսը, ո՛վ է, ո՛վ է.
Մեր շարքումն է Կլիմ Վորոշիլովը։

Ձիերը դոփում են, տրտինգ տալիս.
— Բերում ենք ընկերներ, ա՛յ, կերը ձեր.
— Յեկեք շո՛ւտ!
— Գալիս ենք, ահա, գալիս,
Բերում ենք ձեր կերը, ընկեր ձիեր.
Ե՜խ, ո՛վ է հերոսը, ո՛վ է, ո՛վ է.
Մեր շարքումն է Կլիմ Վորոշիլովը։

Հնչում է հրամանը.
— Շտապ ձիու վրա!
Պատրաստ է. շարժվում ենք հանգիստ քայլով։
Թնդում է քայլերգը. տրա՛-րա՛ րա՛-րա՛,
Ժպտում են զենքերը ուրախ փայլով։
Ե՜խ. ո՛վ է հերոսը. ո՛վ է, ո՛վ է
Մեր շարքումն է Կլիմ Վորոշիլովը։

Ահա լեռները, ահա անտառ.
Շարժվում ենք զգույշ, թեթև ու լուռ.

«Թշնամին» մեր դեմն է դարան մտած,
«Թշնամին» սպասում է մեր շարժվելուն։
Ելե՜. ով է հերոսը, ո՞վ է, ո՞վ է
Մեր շարքումն է Կլիմ Վորոշիլովը։

Շարժվում ենք զգույշ, թեթև ու լուռ,
Անցնում ենք անտառը. ահա գետը...
«Թշնամին» սպասում է, սպասում դուր,
Նա մնաց այն կողմը, լերան յետև։
Ե՜խ, ով է հերոսը, ո՞վ է, ո՞վ է,
Մեր շարքումն է Կլիմ Վորոշիլովը։

Արշավում ենք արդեն վարժ ու վստահ
«Թշնամու» թիկունքն ենք անցել արդեն։
Հնչում է հրամանը խիստ ու հաստատ.
— Գրոհել հանկարծ, շղթան քանդել...
Ե՜խ, ով է հերոսը, ո՞վ է, ո՞վ է,
Մեր շարքում է Կլիմ Վորոշիլովը։

— Ե՜խ, ընկեր ձիեր, սլացեք շուտ,
«Թշնամին» սպասում է մտած դարան.
«Թշնամին» սպասում է մեր շարժվելուն.
Սլացեք ձիեր, արագ, արագ...
Ե՜խ, ով է հերոսը, ո՞վ է, ո՞վ է,
Մեր շարքումն է Կլիմ Վորոշիլովը։

Վորպես մի հեղեղ արագընթաց՝
Սլանում ենք ցած լերան լանջից.



Ահա «Թշնամին» դիրքերն ահա
Ձգված զուգահեռ բլրի լանջին։
Ե՜խ, ով է հերոսը, ո՞վ է, ո՞վ է,
Մեր շարքումն է Կլիմ Վորոշիլովը։

— Ուռռա՜-ա՜-ա, թնդում է մեր ձայնը գոռ,
«Թշնամին» շփոթ խուճապում է.
Մեր դասակները ուրախ յերգով
Սկսում են «Թունդ հարձակումը»...
Ե՜խ, ով է հերոսը, ո՞վ է, ո՞վ է,
Մեր շարքումն է Կլիմ Վորոշիլովը։

«Թշնամին» անկարգ պաշտպանվում է,
Իսկ հետո բռնում նահանջի գիծ.
Մեր ջոկատները ողակում են,
Արագ կազմում են մի շրջագիծ
Ե՜խ, ով է հերոսը, ո՞վ է, ո՞վ է,
Մեր շարքումն է Կլիմ Վորոշիլովը։

— «Անձնատուր»-գոչեց գնդապետը,
«Թշնամին» լսում է հրամանը.
Ողակը սեղմվում է հետզհետե
Յեվ վոչ մի հնար ճեղքել շղթան։
Ե՜խ, ով է հերոսը, ո՞վ է ով է,
Մեր շարքերումն է Կլիմ Վորոշիլովը։

Նորից վերջին փորձ ու վերջին ճիգ,
Յեվ անձնատուր է մեր «Թշնամին»

Թնդում է մարշը ու շարքերից
Արձագանքում են խրոխտ մարշին։
Ե՜խ, ով է հերոսը, ով է ո՞վ է,
Մեր շարքումն է Կլիմ Վորոշիլովը։

Վերադառնում ենք դեպի քաղաք՝
Ձիերը քայլում են թեթև ու գոհ.
Թնդում են շարքերը բազմաղաղակ,
Լեռները կրկնում են իրար հերթով։
Ե՜խ, ով է հերոսը, ով է, ո՞վ է,
Մեր շարքումն է Կլիմ Վորոշիլովը։

Ժպտում են զենքերը, ժպտում են այսոր,
Ձիերը տրտինգ են տալիս հպարտ.
Վերադառնում ենք ուրախ մարշով՝
Հետևում թողած սար, ձոր ու արտ։
Ե՜խ, ո՞վ է հերոսը, ով է, ո՞վ է
Մեր շարքումն է Կլիմ Վորոշիլովը։

22/IV 31թ. Երևան։



## ԼԻՐԻԿԱ

(Հատված)

Մենք ցասումով յելանք այն որերի բոցում,
Այն գոռ պայքարների բոցերում շեկ,—
Յերբ վոր ռումբերն եյին գաղջ ոդը սղոցում
Յեվ արեվը գունատ ասեղներով փշե
Ասեղում եր մեր մեշկ մարմինները դալուկ...
Մենք կտրեցինք այնքան հարթություններ անծայր,
Բարձրություններ այնքան պարսպաձեվ ու թեք.
Քաղցի դեմ կռվեցինք, ձյան բլուրներ անցանք,
Բայց քայլեցինք համառ ու չ՝ լացինք յերբե՛ք...
Մեր դեմ յելան գնդեր ու բանակներ զինված,
Տանկեր զրահապատ,
Ու ռումբ,
Ու գնդացիր.
Աերոնները վերից գազեր տեղացին ցած,
Ցուրտը բրքջում եր.
— «Դիմացի՛ր»...
Բայց մենք գրոհեցինք...
— Եխ՝, սատանան տանի—
Չե՞ վոր սովոր եյինք ծարավի ու քաղցի,
Չե՞ վոր հաշվում եյին Նրանք մեզ կենդանի...
— Ինչ՞ պիտ կորցնեյինք շղթաներից բացի...
Ու մենք գրոհեցինք...
Գրոհեցինք անկանգ,

Բարձրություններ անցանք պարսպաձև ու թեք-
Քաղցի դեմ կռվեցինք,
Չյան բլուրներ անցանք,
Բայց քայլեցինք համառ, ու չ՝ լացինք յերբեք...
Պինդ սեղմեցինք մեր մերկ, կրծքին զենքերը սառ
Յեվ ձեռքներս ամուր բլթակներին դրած՝
Մենք քայլեցինք հպարտ, ու խրոխտ՝ ու համառ,
Կրակեցինք նորեն ու քայլեցինք առաջ։
Իսկ մեր դիմաց գնդեր ու բանակներ գինված,
Տանկեր զրահապատ,
Ու ռումբ,
Ու գնդացիր.
Վերից՝ աերոնները—զազեր տեղացող ցած,
Դեմից՝ ցուրտը դաժան...
— Դիմացիր...
Բայց մենք գրոհեցինք, գրոհեցինք առաջ,
Մեր շարքերից ընկան բյուր հերոսներ անժամ,
Վոր ունելին այնքան ընդվզումներ պահած,
Այնքան ծիածանող մաքեր..,
Այնքա՜ն...
Ընկան նրանք հպարտ դասակարգի մարտում,
Ընկան անհառաչանք, հերոսական մահով.
— Չե՞ վոր դասակարգը նոր ուղի յեր հարթում
Դաժան ու փշապատ, բայց լուսավոր։
Պայքարների բոցում կոփվում եր ամրանում
Դործարանում ծնված, յելնող մի դասակարգ



Հարկավոր եր նրան զոհեր տալ անհատնում,
Վոր իր աշխատանքի ղեկավարը դառնար։

. . . . . .

... Յեվ յելավ Նա, հսկայական տիտանը մաքի,
Վորին դասակարգը տվեց նյարդերը իր
Վորին դասակարգը ծնեց իր յերկունքի,
Իր գրոհի, մարտի, ընդվզումի պահին...
Յելավ ղեկավարը և հանճարեղ մատը
Ղեկավարեց հանգիստ...
Դասակարգը յելավ...
Յելան գործարանից. թողին հանքը, արտը...
= Խաղաղություն խրճիթներին.
Պալատներին — մահ...

. . . . . .

..Մենք ցասումով յելանք այն որերի բոցում,
Այն գոռ պայքարների բոցերում շեկ.
Յերբ վոր ռումբերն ելին գաղջ ողը սղոցում,
Յեվ արևը գունատ ասեղներով փշե
Ասեղում եր մեր մերկ մարմինները հիվանդ...
Պինդ սեղմեցինք մեր մերկ կրծքին զենքերը սառ
Յեվ ձեռքներս ամուր բլթակներին գրած՝
Մենք քայլեցինք հպարտ,
Ու խրոխտ,
Ու համառ,
Կրակեցինք նորեն ու քայլեցինք առաջ։
Գրավեցինք վերջին ամրոցները հերթով—

Ու թշնամին փախավ սահմաներից անդին։
Յեվ մեր հաղթանակի, հերոսական յերթով
Դարձանք նոր կյանք տալու գործարանին,
. . . . . . . . . . . . . . . . . հանքին...
...Յերկի՛ր!. մենք քեզ տվինք մեր արյունը կարմիր,
Տվինք յեռանդն մեր քրտինք տասը տարում.
Յեվ մեր աշխատանքից քո հողին ու քարին
Կայաններ են ծնվում,
Գիգանտներ են հասնում...
Բայց թշնամին, ահա, սահմաններից անդին
Վորոճում է դավեր արնածարավ ու ժանտ...
Ուզում է նա նորից սահմաններդ քանդել,
Նորից քեզ դարձնել մահատարած մի բանտ...
Բայց մենք կելնենք նորից հոկտեմբերյան մարշով,
Կ՚պաշտպանենք մեր մեծ նվաճումներն արյամբ։
— Մենք ուրիշի հողից չենք ուզում մի արշին,
Իսկ մերից վոչ վոքի նույնիսկ մի թիզ չենք տա...

---

ՀՍՍՌ-Арм ССР



ՀՀ Ազգային գրադարան
NL0352047

40220

ԳԻՆԸ 20 ԿՈՊ. (3/4 Մ.)

Х. РАЧИАН

# РОЖКИ

Госиздат ССР Армении
Эривань—1931